Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա-Ի:6.105

№ 7 Հրատ. Յովհաննէս Դաւթեանի № 7

Ա. ԱՆՆԵՆՍԿԱՅԱ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Թարգմ Ս. Տէր-Անանեան

321
Ա-60

ԹԻՖԼԻՍ 1906
Տպարան „ՀԵՐՄԷՍ" Մադաթեան փող. 5
(166)

Арм.
321
Ա-60
Ձ-4618ա
26 SEP 2006

№ 7 Հրատարակութիւն Յովհաննէս Դաւթեանի № 7

Ա. ԱՆՆԵՆՍԿԱՅԱ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Թարգմ. Ս. Տէր-Անանեան

21011

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ՀԵՐՄԷՍ» Ընկ. Մադաթեան փող. № 15
1906 (166)

15212

13 FEB 2013

ՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. библиотека
ՀՍՍՀ ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

39827-63

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

«Հանրապետութիւն» ասելով ոմանք այնպիսի տէրութիւն են հասկանում, որի կառավարութեան ույժը թոյլ է, ուր ամեն մարդ՝ առանց օրէնքներից քաշուելու, անում է այն, ինչ ցանկանում է, ուր ամեն ոք կարող է անկարգութիւններ առաջացնել և խախտել խաղաղ բնակիչների իրաւունքները։ Այդ կարծիքը միանգամայն սխալ է։ Հանրապետութեան մէջ կառավարութեան ույժը պակաս զօրաւոր չէ, որքան միապետական երկրներում. այնտեղ էլ գոյութիւն ունեն նմանօրինակ խիստ օրէնքներ, ուրիշի իրաւունքը խախտող ամեն յանցագործութիւն պատժող դատարաններ և կարգ ու կանոն, կեանքի խաղաղ ընթացքի վրայ հսկող ոստիկանութիւն։

Եթէ կառավարութեան գլուխ կանգնած է մի մարդ՝ թագաւոր, կայսր, վեհապետ, սուլթան՝ տէրութիւնը կոչւում է միապետութիւն։ Միապետական երկրում վեհապետի իշխանութիւնն առհասարակ հօրից անցնում է ժառանգաբար որդուն, կամ մօտիկ ազգականին։ Որ ժողովուրդն

ինքն ընտրէր թագաւոր՝ հազիւ է պատահում, այն էլ սովորաբար այն դէպքում, երբ թագաւորը մեռնում է իրենից յետոյ ոչ մի մօտիկ ազգական չթողնելով, կամ թէ նոր թագաւորութիւն կազմուելիս։ Այդպէս եղել է Ռուսաստանում Միխայիլ Ֆէօդորովիչի ընտրութեան ժամանակ, որ ռուսաց այժմեան կայսրների նախահայրն է, այդպէս եղել է Բուլղարիայում, երբ նա Տաճկաստանի լծից ազատուեց. այդպէս եղաւ և վերջերս Նորվեգիայում, երբ սա Շվէդիայից բաժանուելով առանձին պետութիւն կազմեց։

Որքան էլ թագաւորը խելօք, ուժեղ ու բանիմաց լինի՝ չի կարող մենակ, անձամբ հասկանալ տէրութեան բոլոր գործերը։ Անխուսափելի կերպով նրան օգնականներ են հարկաւոր։ Ու նա ընտրում է այդ օգնականներին՝ նախարարներին (մինիստր) իր սեփական ցանկութեամբ և նրանցից իւրաքանչիւրին յանձնարարում կառավարութեան որ և է մասը։ Նախարարներն էլ իրանց կողմից են հրաւիրում օգնութեան զանազան աստիճանաւորների (չինովնիկ) և նրանց հսկողութեանը յանձնում այս կամ այն գործերը։ Վերջ ի վերջոյ դուրս է գալիս, որ ժողովուրդը գործ չի ունենում ոչ միայն թագաւորի, այլ և նրա նախարարների հետ, և միապետի կամքը նրան հասնում է աստիճանաւորների մի ամբողջ սանդուղի միջոցով։

Նախարարներն ամբողջովին կայսրից կախում

ունեն։ Նա է միայն քննում, թէ լաւ են կատարում արդեօք նրանք իրենց վստահած պարտականութիւնը. նա միայն կարող է նրանց զրկել պաշտօնից կամ ուրիշ տեղ նշանակել։ Նախարարները կառավարում են տէրութեան բոլոր արդիւնքները, և պետական փողերը ծախսում այն նախահաշուի համաձայն, որ կազմում են իրենք ու հաստատում է թագաւորը։ Թէ որ աստիճան արդարացի է կազմուած այդ նախահաշիւը, նրանք ոչ ոքի հաշիւ չեն տալիս, բացի թագաւորից։ Թագաւորն իր կամքով կարող է հարկերն ու տուրքերը քչացնել կամ շատացնել, հաւաքել ժողովրդի այս կամ այն մասից. նա կարող է տէրութեան ծախքերը կրճատել, կամ, ընդհակառակն, ընդլայնել. կարող է իր անձնական պէտքերի համար նրանցից ջոկել այն գումարները, որ ինքը կարևոր կհամարի։ Նախարարները կազմում են օրէնքները, իսկ թագաւորը հաստատում է, ու նրանք հսկում են, որ այդ օրէնքները խստիւ կատարուեն։ Թագաւորն ու իր նախարարները նոյնպէս ենթարկուում են օրէնքներին, բայց քանի որ օրէնք վերացնելը կամ հինը նորով փոխարինելը միանգամայն թագաւորից է կախուած՝ ապա նա միշտ էլ կարող է ոչնչացնել այն օրէնքը, որ իրեն համար այնքան էլ ձեռնտու չի համարի։ Այն տէրութիւնը, որ կառավարուում է այդ եղանակով, կոչւում է անսահման միապետութիւն, երբ այդտեղ վեհապետի կամքը չի սահմանա-

փակված որ և է ուրիշ կամքով։ Բոլոր հպատակները պարտաւոր են կատարել նրա տուած օրէնքները, և չեն համարձակւի քննել թէ լաւ կամ վատ են այդ օրէնքները, բաւարարութիւն են տալիս իրենց պահանջներին, թէ ոչ։

Բացի անսահման միապետութիւնից կայ և սահմանաւոր միապետութիւն։ Սրա կառավարութեան գլուխ կանգնած է նոյնպէս ժառանգական միապետը՝ ու այլ և այլ կարգի գործեր վարում են նախարարները. սակայն ժողովուրդը նոյնպէս մասնակցում է տէրութիւնը կառավարելու խնդրին. գոնէ նախարարների գործունէութիւնն ըստուգելու իրաւունք ունի։ Այդ նպատակով ժողովուրդն ընտրում է իր լիազօրներին՝ պատգամաւորներին՝ որոնք կազմում են առանձին ժողով, պարլամէնտ, վերաքննիչ ատեան և այլն։ Պատգամաւորների այդ ժողովը խորհրդածութեան է առնում նախարարների կազմած օրէնքները. քննելով, մերժում է այնպիսիները, որոնց ազգաբնակութեան համար անօգուտ է գտնում, միւսների մէջ իրեն հայեցակէտերն ու փոփոխութիւններն է մտցնում, մի քանիսն էլ, վերջապէս, համաձայնում է ամբողջովին ընդունել։ Կայսրն օրէնքը հաստատում է արդէն պատգամաւորների քննութիւնից ու ընդունելուց յետոյ, և այդպիսի օրէնքը միայն ոյժ ունի, այդպիսի օրէնքին միայն ամենքը պարտաւոր են հնազանդւել։

Սահմանաւոր (սահմանդրական) կայսրութեան մէջ թագաւորն ինքն է ընտրում ու նշանակում նախարարներին, որպէս և անսահմանի մէջ, սակայն այդ նախարարներն իրենց գործունէութեան համար հաշիւ են տալիս ոչ միայն նրան, այլ և պատգամաւորներին, ժողովրդի ներկայացուցիչներին։ Պատգամաւորներն իրաւունք ունեն իրենց դժգոհութիւնն արտայայտել նրանց, եթէ որ և է անփութութիւն նկատեն նրանց գործերի մէջ. իրաւունք ունեն հարց ու փորձ անել նրանց վարչութեան մէջ կատարւած ամեն անարդարութեան համար։ Անընդունակ երևացած նախարարին պատգամաւորներն իրաւունք չունեն պաշտօնից հեռացնել, բայց նրանք իրենց անվստահութիւնը կարտայայտեն դէպի նա, և այդ անվստահութիւնը կվերաբերի բոլոր նախարարներին, քանի որ բոլոր նախարարները կազմում են մի «կաբինէտ», ու ամենքն էլ շատ կամ քիչ չափով պատասխանատու են միմեանց համար։ Այնուհետև ժողովրդի ներկայացուցիչներն այդ նախարարութեան մտցրած ոչ մի օրէնք չեն ընդունի։ Կայսրը կամայ ակամայ ստիպւած կլինի արձակել այդ նախարարութիւնը՝ որ անհաճոյ է ժողովրդի պատգամաւորներին, ու ընտրել նորը, նրանց վստահութիւնը վայելող մարդկանցից։ Երբեմն, ասենք, նա այլ միջոցի է դիմում. նա արձակում է ներկայացուցիչների ժողովը և նոր ընտրութիւններ յայտարարում։ Եւ այդ այն միտումով, որ իմա-

նայ թէ ժողովուրդն իր պատգամաւորների հետ համաձայն է. եթէ երևաց՝ որ համաձայն է, որ նոր ժողովն էլ ճիշտ այնպէս անվստահ է դէպի նախարարները՝ այն ժամանակ նա ստիպված է զիջել, այսինքն արձակել նախարարների կաբինէտը։

Ժողովրդական ներկայացուցիչների ժողովը տէրութեան բոլոր ծախքերի ու արդիւնքների սկզբնական հաշիւը ստուգում և մանրամասն քննութեան է ենթարկում։ Ոչ մի հարկ կամ տուրք չի կարելի պահանջել հասարակութիւնից, առանց նրանց թոյլտուութեան։ Նրանք նոյնօրինակ ուշիմութեամբ ուղղում են ծախքերի բոլոր յօդուածներն ու կրճատում այնպիսիները, որ իրենց չափից վեր ծանր է թւում։ Հէնց պատգամաւորներն իրենք են որոշում, թէ թագաւորը, նրա ընտանիքն ու պալատը տարեկան ինչքան պէտք ծախսի։ Տէրութեան փողերը կարգադրելու այդ իրաւունքը պատգամաւորների ժողովին աւելի այժ է տալիս։ Այնպէս որ, թագաւորը, եթէ ուզենար մի որոշ ժամանակ նրանց ժողովի չհրաւիրել՝ չէր կարող, քանի որ առանց նրանց կարգադրութեան ոչ ոք իրաւունք չունի ոչ հարկեր պահանջել, ոչ վճարել. մինչև անգամ ինքը կայսրը չէ կարող ոչ մի կոպէկ ստանալ պետական գանձարանից։

Սահմանադրական երկրներում կայսեր անձը համարւում է անպատասխանատու, այսինքն ոչ ոք իրաւունք չունի դատել վեհապետին նրա ա-

ռաքների համար, կամ նրա գործերից հաշիւ պահանջել։ Այդ բանի շնորհիւ մի թագաւոր, որ իր ժողովրդի շահերի մասին չի հոգում, կամ չի հասկանում թէ ինչի մէջ է կայանում այդ շահը՝ կարող է ազգաբնակութեանը վնասակար որ և է կարգադրութիւն անել. բայց, որպէսզի խոյս տրւի նման վտանգից՝ սահմանադրական-միապետական երկրներում այսպիսի մի օրէնք գոյութիւն ունի —կայսեր ամեն հրահանգ (ուկազ), օրինական է դառնում միայն այն դէպքում, երբ նրա տակ ստորագրել է նախարարներից մէկն ու մէկը։ Բոլոր նախարարները պատասխանատու են ժողովրդական ներկայացուցիչների ժողովի առաջ, հետևապէս և իւրաքանչիւրը նրանցից չի ստորագրի կայսերական այնպիսի հրահանգ, որ ներկայացուցիչներին հաճելի չէ։

Անսահման միապետութեան ժամանակ կայսեր հպատակներն առանց դէս ու դէնի պարտաւոր են խոնարհւել նրա հրատարակած կարգադրութիւնների, օրէնքների առաջ։

Նրանց գործը չէ, թէ վատ կամ լաւ, օգտակար կամ վնասակար են այդ օրէնքները. բաւական է, որ նրանք իմանան թէ այդպէս է մտածում ու կամենում թագաւորն իր նախարարների հետ։ Եթէ նրանք որ և է չինովնիկի գործունեությունը նկատեն՝ բողոքելն իզուր է, քանի որ բողոքը պիտի գնայ հէնց այն նախարարին կամ նահանգապետին, որ նշանակել է այդ չինովնի-

կին. իսկ եթէ նրանք կամենան իրենց կարիքների մասին իրեն, թագաւորին իմաց տալ, նրանց ձայնը կխեղդւի այն երկար շարան այլ և այլ աստիճանաւորների կողմից, որոնք կանգնած են նրանց և կայսեր մէջ։

Բոլորովին ուրիշ է սահմանաւոր կամ սահմանադրական պետութեանց մէջ։

Այդտեղ ամեն քաղաքացի անտարակոյս քննում է կայսեր տւած ու իրենց պատգամաւորների հաստատած օրէնքները։ Նրանք պարտաւոր են վերլուծել, թէ համապատասխանում են արդեօք այդ օրէնքները տեղական պայմաններին, և ընդգծել նրանց պակասութիւններն ու այն փոփոխութիւնները, որ իրենք կարեւոր կգտնեն մտցնել նրանց շարքը։ Աստիճանաւորների զանցառութիւնները նոյնպէս անուշադիր չեն մնում. ամեն մարդ գիտէ, որ նրանց մասին կարելի է յայտնել նախարարներին, և նրանք կշտապեն ուղղել իրենց ստորադրեալներին, ժողովրդի վստահութիւնը կորցնելու երկիւղից։

Ժողովրդական ներկայացուցիչների ժողովի համար պատգամաւոր ընտրելիս նոյնպէս ամեն մարդ պէտք է շատ մտածէ ու խորհէ՝ պէտք է ընտրել այնպիսի մարդու, որ տեղական հանգամանքները շատ լաւ գիտէ, և հարկաւոր դէպքում կարող է ուրիշներին բացատրել. կարգին մարդու, որ չի շլանայ փառքով ու իր ընտրողներին դաւաճանի. խելօք և առողջամիտ մարդու,

որ կարող լինի պետական բարդ խնդիրներում թէ ինքը գլուխ դուրս տանել, թէ տեղեակ մարդկանց օգնութեանը դիմել, մարդիկ, որ անշահախնդիր կերպով ժողովրդի բարիքն են ցանկանում։

Այդ բոլորի համար էլ սահմանադրական պետութեան ամեն մարդու անհրաժեշտ է գրքեր ու լրագիրներ կարդալ, ժողովներ յաճախել, լսել իրեն հետաքրքրող հարցերի մասին այլ և այլ կարծիքներ, և անհրաժեշտ է նոյնպէս, որ ինքն ազատ ու համարձակ իր մտքերն արտայայտի, որպէս զի իմանայ թէ ո՞րպիսի առարկութիւններ կարող են լինել իր հայեացքների դէմ, ու թէ ով է համամիտ իրեն հետ։ Ահա թէ ինչու բոլոր սահմանադրական երկրներում կայ և գոյութիւն ունի ամեն տեսակ խմբումների ու ժողովների, խօսքի ու մամուլի ազատութիւն, կայ անձի անձեռնմխելիութիւն, այսինքն ոչ ոք իր ճառախօսութիւնների համար պատասխանատուութեան չի տարւում, ոչ ոք առանց դատարանի չի կարող զրկւել ազատութիւնից ու գանազան հալածանքների ենթարկւել ոստիկանութեան քմահաճոյքներով։

Հանրապետական ձևի կառավարութեան մէջ առանձին անհատներն աւելի շատ են մտածում, հոգում հասարակական խնդիրների մասին, քան սահմանաւոր միապետութեան մէջ, որովհետև ժողովուրդն այս դէպքում վարչական գործերին

մասնակցում է աւելի մեծ չափով, քան ամեն այլ եղանակի կառավարութեան դէպքում։

Որ և է երկրի ամբողջ ժողովուրդը՝ բոլոր քաղաքացիները *), հասկանալի է, չեն կարող ինքներն անմիջական կերպով թէ օրէնքներ կազմել, և թէ կատարել այդ օրէնքները։ Մինչև անգամ մանր համայնքներում հասարակութիւնն ընդհանուր ժողովի ժամանակ որ և իցէ վճիռ դնելով, ի կատար ածելը յանձնարարում է յատուկ ընտրուած մարդկանց՝ տանուտէրին, տեղական վարչութեանը և այլն։ Հանրապետութեան մէջ օրէնքներ հրատարակելու իրաւունքը պատկանում է ժողովրդից ընտրուած ներկայացուցիչների ատեանին. իսկ կատարողական իշխանութեան գլուխ ժառանգական վեհապետի փոխարէն բռնում է նորից ընտրեալ անձնաւորութիւն՝ նախագահը, որ, սովորաբար, ընտրւում է կառավարելու ոչ թէ իր կեանքի ամբողջ ընթացքում, այլ մի քանի տարով, և որի իշխանութիւնը միշտ էլ սահմանափակ է, երբեմն աւելի, երբեմն պակաս։

Հանրապետութեան մէջ եթէ ժողովրդի մի խաւը կամ դասակարգը տիրում է բոլոր միւս

*) Այս գրքոյկի մէջ քաղաքացի բառի տակ պէտք է հասկանալ և գիւղացիներին. իրաւունքի տեսակէտից ամեն մարդ «քաղաքացի» է։

Ծ. Թարգմ.

դասակարգերին, այն ժամանակ ստեղծւում է այսպէս կոչուած aristocratical կամ արտօնեալների հանրապետութիւն։ Այդպիսի հանրապետութեան կամ հասարակապետութեան իշխանութիւնը պատկանում է տիրապետող դասակարգի կամ խաւի ներկայացուցիչների ժողովին. հէնց այդ դասակարգը կամ խաւն էլ իր միջից ընտրում է նախագահին։ Սկզբներում այդպիսի մի քանի տեսակի հանրապետութիւններ են եղել, ուր իշխանութիւնը մի տեղ ամենայայտնի, մի ուրիշ տեղ ամենահարուստ մարդկանց ձեռքն է եղել. սակայն ներկայումս գոյութիւն ունեն միմիայն ռամկավարական հանրապետութիւններ, այսինքն այնպիսիները, ուր քաղաքական իրաւունքների տէրը հանդիսանում է ամբողջ ժողովուրդը.—հասարակութեան ամեն խաւի ու դասակարգի անհատներ, որոշ տարիքի հասած և դատարանով չարատաւորուած՝ պատգամաւորական ժողովի համար ընտրում են իրենց ներկայացուցիչները. ամեն մարդ կարող է ընտրուել ու մինչև անգամ հանրապետութեան նախագահ դառնալ։ Օրինակ ֆրանսիական հանրապետութեան առաջւայ նախագահը՝ Լուբէն մահուդ վաճառողների ընտանիքից է, իսկ այժմեանը երիտարարդ հասակում գրասենեակի մի պարզ գրագիր է եղել։ Հիւսիսային-Ամերիկայի Միացեալ Նահանգների ամենայայտնի նախագահներից մէկը՝ Աբրահամ Լինկոլ՛նը, որի օրով նեգ-

բերի սարկութիւնը վերացաւ, ջահիլ ժամանակ անտառից գերաններ էր քշում գետերով։

Ֆրանսիայում նախագահին ընտրում է այսպէս կոչուած Ազգային Ժողովը, որը կազմուում է պատգամաւորների ատեանից (ամբողջ ժողովրդի ներկայացուցիչները) և Սենատից, որի անդամները (300 հոգի) պէտք է 40 տարեկանից պակաս չլինեն, և որոնց ընտրում են ամեն դեպարտամէնտում (մեր նահանգների նման) տեղական պատգամաւորներն ու տեղական ինքնավարութեան ներկայացուցիչները։ Նախագահը համարւում է կատարողական իշխանութեան գլուխ. նա է նշանակում նախարարներին ու բարձր պաշտօնեաներին. նա է պատգամաւորների ատեանի քննութեանը յանձնում իր ցանկացած օրէնքները, որոնց, սակայն՝ ատեանը կարող է և չընդունել։

Եթէ երկու բարձրագոյն ատեանները, այսինքն պատգամաւորների ատեանը և սենատը որ և է օրէնք ընդունեն, նախագահը չի հրաժարւի հաստատելուց։ Նա իրաւունք չունի, առանց այդ ատեանների համաձայնութեան, պատերազմ յայտարարել. իսկ օտար պետութիւնների հետ դաշինք կարող է կապել ոչ-այնքան կարևոր գործերի համար. մինչդեռ բոլոր կարևոր դաշնադրութիւնները, օրինակ առևտրի, տէրութեան ֆինանսների, հողեր ձեռք բերելու կամ զիջելու խնդրում անհրաժեշտ է երկու ատեանների հաստատութիւնը։ Նախագահը, որպէս և ամեն կայսրը, իր պաշտօնէական գործերի համար պատասխանատու չէ, սակայն նա էլ, որպէսզի իւր բոլոր հրամաններն օրինական դարձնէ, պէտք է նախարարներից մէկն ու մէկին ստորագրել տայ։

Իւրաքանչիւր նախարար հսկում է կառավարութեան որ և է մասին և իր նախարարութեան մէջ կատարւող ամեն զանցառութեան համար պատասխանատու է ատեանի առաջ. բացի դրանից բոլոր նախարարները միատեղ պատասխանատու են կառավարութեան ամբողջ գործունէութեան համար։

Հիւսիսային-Ամերիկայի Միացեալ Նահանգների հանրապետութեան նախագահն ընտրւում է բոլոր ժողովրդից, այսինքն ամեն իրաւունքի ընդունակ (եթէ կարելի է այսպէս ասել) քաղաքացիներից երկաստիճան ընտրութեամբ. ժողովուրդն ընտրում է ընտրողներ, իսկ սրանք ձայների մեծամասնութեամբ ընտրում են նախագահ չորս տարի ժամանակով։ Նախագահն էլ նշանակում է նախարարներին ու գլխաւոր պաշտօնեաներին և նախարարներն իրենց գործերի համար միայն նրան են հաշիւ տալիս ու նրան են միայն պատասխանատու։ Սակայն, դրա փոխարէն, նախագահն ինքը պատասխանատու է ժողովրդի ներկայացուցիչների առաջ։

Օրէնքներ կազմելու իրաւունքը ժողովրդի

ներկայացուցիչներին է, և եթէ նախագահը համաձայն չէ այդ ատեանի ընդունած օրէնքի հետ՝ կարող է դարձնել վերաքննութեան ենթարկելու, սակայն այդ վերաքննութիւնից յետոյ արդէն պարտական է ընդունել։

Երկիրը կառավարելու գործում ամենամեծ մասնակցութիւն ցոյց է տալիս Զուիցէրիայի ժողովուրդը։

Փոքրիկ Զուիցէրիան ոչ միայն ռամկավարական, այլ և Ֆէդէրատիվ, դաշնակցական հանրապետութիւն է։ Նա բաղկացած է 22 կանտոններից, որոնք լիակատար ինքնուրոյնութիւն ունեն այն ամեն խնդիրներում, ինչ տեղական ինքնավարութեանն է վերաբերում և իւրաքանչիւր կանտոն իր առանձին օրէնքներն ու սովորոյթներն ունի։ Ամբողջ հանրապետութեան համար ընդհանուր օրէնքներն ամեն կանտոն կատարում է իր սեփական պաշտօնեաների միջոցով։ Զօրքը գտնւում է կանտոնների ձեռքը, իսկ Դաշնակցական կառավարութիւնը հիմնում է ընդհանուր կանոններ, նշանակում է աւագ սպաներ և պատերազմի ժամանակ իր վրա է առնում զօրքի հրամանատարութիւնը։

Դաշնակցական կառավարութիւնը վերահսկում է տեղական ատիճանաւորներին և կարող է մասնաւոր մարդուն պաշտպան կանգնել նրանց հալածանքների դէմ։

Դաշնակցական կառավարութիւնը կազմւած

է ա) Ազգային Ժողովից՝ ժողովրդական պատգամաւորների ատեանից, որոնց ընտրում են բոլոր քաղաքացիները բացի հոգևորականներն ու դատարանով արատաւորւածները, 20-ից ոչ պակաս տարիքով, և բ) Միացեալ Խորհրդից, որի համար ամեն կանտոն երկու պատգամաւոր է ընտրում։

Այդ երկու խորհուրդը, այսինքն Ազգային Ժողովը ու Միացեալ Խորհուրդը, միասին ընտրում են կատարողական իշխանութիւն, որ կոչւում է Ֆէդէրատիվ Խորհուրդ կամ Դաշնակցական կառավարութիւն, եօթ անդամից։ Սրանք բարեկարգում են նախարարութեան պաշտօնները ու պետութեան բոլոր գործերը բաժանում իրար մէջ։ Նրանք իրենց մէջից ընտրում են հանրապետութեան նախագահ։ Նախագահը նոյնպէս Ֆէդէրատիվ Խորհրդի միւս անդամների նման վարում է գործերի որոշ մասը։ Նրան ընտրում են ընդամենը մի տարի ժամանակով, և նա տէրութեան աւագի դերը կատարում է գլխաւորապէս տարբեր ձեռնարկութիւններով, նոյնպէս և օտար պետութիւնների հետ յարաբերութիւնները նրա միջոցով են տեղի ունենում։

Ամեն կանտոն տեղական գործերի համար իր օրէնսդրական ատեանն ունի, ժողովրդի ներկայացուցիչներից։ Այդ ատեանը, որ կոչւում է Բարձր Խորհուրդ՝ հրատարակում է օրէնքները, որոշում է հարկերը, [illegible] պաշտօնեաների

ГСС Библиотека
ZUUՌ-ԱՅՄ ՍՍՌ
Ս. ՀՄ. Ա. Մասհանցյան

գործունէութեանը, նշանակում է ամենակարևոր գործիչներին։ Կառավարական իշխանութիւնը կանոններում պատկանում է 5—9 հոգուց բաղկացած մի խորհրդի, որոնց ընտրում է կամ Բարձր Խորհուրդը, կամ հէնց ժողովուրդն ինքը։

Մի քանի կանոններ Բարձր Խորհուրդ չեն ընտրում և գործերը վճռում են բոլոր քաղաքացիների ընդհանուր ժողովում։ Այդպիսի ժողովները սովորաբար լինում են բացօդեայ։ Լանդամանը՝ կանոնի աւագը՝ նստում է ընդարձակ դաշտի կամ մարգագետնի մէջ սեղանի մօտ. նրա շուրջը խմբւում են կանոնի բոլոր տղամարդիկ. իսկ նրանց ետևը՝ կանայքն ու երեխաները։ Լանդամանը պատմում է թէ ինչ է արել անցեալ տարի, յետոյ կարդում է աղօթք ու անցնում այն խնդիրներին, որ ժողովը պէտք է վճռէ։ Նա նոր օրէնքներ է առաջադրում ժողովին, սա քննում է այդ օրէնքները, մի մասն ընդունում, միւսը՝ մերժում. մասնաւոր քաղաքացիներ էլ իրենցից են առաջարկում միջոցներ, որ հասարակութեանն օգտակար են համարում, այդ էլ մանրամասն քննում են նախ քան ընդունելը, այնուհետև որոշում են հարկերը, առաջիկայ տարւայ ել ու մուտքի նախահաշիւը հաստատում, հարկաւոր դէպքում աւագին առաջարկում են ընդհանուր գործերի համար փոխառութիւն անել և, վերջապէս, խորհրդի անդամներ են ընտրում, որոնք աւագի հետ միասին հանդիսանում են թէ

կատարողական իշխանութիւն, թէ այլ պաշտօնեաներ։

Այդպիսով ժողովուրդն ինքն է այստեղ վարում իր գործերը, առանց որ և է ժողովրդական ներկայացուցիչների. բայց այդ հնարաւոր է, ի հարկէ, այնտեղ միայն, ուր բնակիչները բազմաթիւ չեն։ Հարիւր հազար մարդ, պարզ է, չէ կարող մի ժողովի հաւաքւել ու իր գործերի համար կանոնաւոր քննութիւն կատարել։

Մի քանի սակաւաբնակ կանոններում ընդհանուր գործերի համայնական այդ եղանակով կարգաւորելուց զատ, պատահում են դէպքեր էլ, երբ բոլոր զւիցէրացիներն անմիջական մասնակցութիւն են ունենում պետական կարևոր խնդիրներում։ Այդպէս լինում է, երբ անհրաժեշտութիւն կայ հանրապետութեան սահմանադրութեան մէջ որ և է փոփոխութիւն մտցնել, նրա հիմնական օրէնքների նկատմամբ։ Այն ժամանակ Դաշնակցական կառավարութիւնն ամեն քաղաքացու գրաւոր հարցում է ուղարկում թէ, ցանկանում են արդեօք նրանք, որ սահմանադրութեան մէջ այս ինչ փոփոխութիւնը մտցրւի, և ամեն մարդ պարտաւոր է պատասխանել այո կամ ոչ։ Երբ առանձին կանոններ են ցանկանում փոփոխութիւն մտցնել իրենց սահմանադրութեան մէջ, նրանք են դիմում ազգաբնակութեանը հարց ու փորձով։ Երբեմն այդ հարց ու փորձը տեղի է ունենում ուրիշ օրէնքների առթիւ, բացի

սահմանադրականը, որոնք կարևոր են կամ ամբողջ պետութեան շահերի տեսակէտից կամ մի առանձին կանտոնի համար։ Բայց այդ կատարւում է, երբ ժողովրդի մի որոշ մասը պահանջում է. օրինակ համապետական օրէնքների համար ոչ պակաս քան 30,000 հոգի։

Այդպիսով ուրեմն կարելի է ասել, որ Զւիցէրիան կատարեալ ռամկավարական տէրութիւն է. այնտեղ ամբողջ կառավարութիւնը ժողովրդի ձեռքին է գտնւում, բոլոր պաշտօնեաներին ընտրում է կամ ինքը ժողովուրդը կամ նրա ներկայացուցիչները, այդ պատճառով էլ նրանք հանդիսանում են ժողովրդի կամքը կատարողներ. կամք, որ արտայայտւում է կամ պատգամաւորների ատեանը կամ անմիջապէս հէնց քաղաքացիք իրենք։

Այդ պայմաններում ահա ոչ մի ներքին շփոթութիւն, ոչ մի ընդհարում առանձին կանտոնների կամ ժողովրդի տարբեր խաւերի մէջ՝ չեն վրդովում կեանքի խաղաղ ընթացքը, և վարչական բոլոր շրջաններում տիրում է լիակատար կարգապահութիւն։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0189433

Арм.
2-4618а

Յովհաննէս Պարթեւեանի հրատարակութիւնք լոյս են տեսել

1. Մ. Գորկի, Մակար Չուդրա, թարգմ. Ա. Բաբխեանի . . . . 10 կ.
2. Ա. Բաբխեան, Բանաստեղծութիւններ . . . . 20 կ.
3. Լ. Անդրեեւ, Անդամները, թարգմ. Ա. Բաղջիեանի . . . . 10 կ.
4. В. Папазянъ, Дурь-да Дуръ и нагой дервишъ, թարգմ. Հասկաներից Վ. և Ա. Բաղջիեաններից . . . . 12 կ.
6. А. Агаронянъ, кусочекъ жизни, [illegible] թարգմ. [illegible] Վ. Բաղջիեանի . . . . 10 կ.
7. [illegible]

[illegible]